ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/19>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան 04-09 օգոստոս 2021թ.

ժամը 9:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան/ԳԱՊ/

անդամներ՝ Հասմիկ Ղոնյան/ԳԱ/, Աննա Փարսադանյան/ԳԱ/, Անի Մելիքսեթյան/ԲԱ/, Արմինե Աբրահամյան/ԲԱ/

քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

**<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 Գնման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է 35087370 դրամ,

1.2<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտ է ներկայացրել.

| հ/հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Էլ. հասցեն |
|---|---|---|
| 1. | Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ | knorogshin@yandex.ru |

1.3. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ընդունվել են և սահմանված կարգով բացվել բացող անդամների կողմից, համարվել են հետագա գնահատման համար ընդունելի և ներկայացվել գնահատման հաջորդ փուլ:

2. Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին նկատմամբ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն՝ ծավալաթերթ նախահաշվի բաժինը չի համապատասխանում հրավերով սահմանված կշիռներ 10 տոկոս դրական կամ բացասական շեղմանը.

3.Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝

ա/ 1 աշխատանքային օրով կասեցվել է նիստը և ծանուցվել մասնակցին անհապատասխանությունը շտկելու վերաբերյալ

բ/ նիստը հետաձգվել է նաև մասնակցի կողմից հայտի բնօրինակը ներկայացնելու կապակցությամբ,

գ/ հայտերի բացման-գնահատման նիստի օր է սահմանվել 2021թ. օգոստոսի 6-ը, ժամը 09:00-ն:

4.Ընդունվել է ի գիտություն, որ Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ կողմից

ա/ սահմանված կարգով և ժամկետում՝ մինչև հայտերի բացման նիստին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 17:00-ն ներկայացվել է հայտի ապահովման բնօրինակը,

բ/ շտկվել է անհամապատասխանությունը, որը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

գ/գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է օգոստոսի 9-ին, ժամը 09:00-ին:

5. Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ստորև.

/ՀՀ դրամ/

| ՀՀ | Անվանումը | Նախահաշվային գին | Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գումար |
| 1 | Վաչագան գետի հունի մեջ ջրավազանի կառուցման և պատվարի ստեղծման, խոշորաբեկոր էլեմենտների որսման և գետի հունի մաքրման աշխատանքներ | 35087370 | 27241589 | 5448312 | 32689907 |

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ գնային առաջարկում առկա է հաշվարկի անճշտություն:

6" Գնահատող հանձնաժողովի անդամները գնահատել են, որ <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/19>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին նկատմամբ մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հետևյալ կերպ՝

| h/h | Մասնակցի անվանումը /անունը/ | Հրավերով սահմանված նվազագույն պահանջները | |
|---|---|---|---|
| | | Պիտանելիության չափորոշիչ | Ֆինանսական չափորոշիչ |
| 1. | Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ | Համապատասխանում է | Չի համապատասխանում |

7.Ընթացակարգի հրավերի և հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8.Հանձնաժողովը որոշեց՝

8.1.Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել ՍՊԸ հայտը, հիմք՝ գնային առաջարկի անճշտություն,

8.2.գնման գործընթացը շարունակել օրենքով սահմանված կարգով, ապահովել համապատասխան ծանուցումների, հայտարարությունների ուղարկումը և հիրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ------------------------ Ա. Սարգսյան

անդամներ ------------------------ Հ. Ղոնյան

------------------------ Ա. Փարսադանյան

------------------------ Ա. Մելիքսեթյան

------------------------ Ա. Աբրահամյան

Քարտուղար ------------------------ Լ. Ավետիսյան